

# ANNUAL REPORT



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՁԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱՎՈՐ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ



## *Տարեկան հաշվետվություն*

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

Նախաբան..... 5

Գյուտեր եւ օգտակար մոդելներ ..... 7

Ապրանքային նշաններ եւ արդյունաբերական  
նմուշներ..... 9

Ֆիրմային անվանումներ ..... 11

Տեղեկատվական տեխնոլոգիաներ..... 12

Լիցենզային եւ զիջման պայմանագրերի  
գրանցում ..... 14

Իրավական դաշտ ..... 14

Միջազգային համագործակցություն..... 15

Հրատարակվում է ՀՀ մտավոր սեփականության գործակալության կողմից

Խմբագրական կոլեգիա Արմեն ԱԶԻԶՅԱՆ  
Անդրանիկ ԽԱԶԻԿՅԱՆ  
Մանվել ԲԱԲԱՅԱՆ  
Գոհար ԱՂԱՄՅԱՆ  
Դիզայն եւ էջատում Նաիրա ԶԵՅՐԱՆՅԱՆ

375010, Երեւան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3

Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին

Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Internet: <http://www.armpatent.org>

E-mail: [armpat@cornet.am](mailto:armpat@cornet.am)

© ՀՀ մտավոր սեփականության գործակալություն

## ՆԱԽԱԲԱՆ

Մտավոր սեփականության բնագավառի Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան Հայաստանի Հանրապետության մտավոր սեփականության գործակալությունը 2005 թ. շարունակեց արդյունաբերական սեփականության օբյեկտների իրավական պահպանության ապահովման հետ կապված՝ գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային նշանների, ապրանքների ծագման տեղանունների հայտերի ընդունման, փորձաքննության անցկացման, պահպանական փաստաթղթերի տրամադրման, ինչպես նաև պաշտոնական տեղեկությունների հրապարակման եւ իր կանոնադրությամբ նախատեսված այլ աշխատանքների կատարումը:

Ուշադրություն է դարձվել նաև բնագավառի կատարելագործմանը վերաբերող աշխատանքներին, նասնավորապես իրավական դաշտի կատարելագործմանը. մշակվել են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքի, ինչպես նաև դրա հետ կապված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը:

«Արտոնագրերի մասին» Հայաստանի Հանրապետության նոր օրենքի, «Ապրանքային եւ սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքներն ուժի մեջ մտնելու կապակցությամբ մշակվել եւ ՀՀ առեւտրի եւ տնտեսական զարգացման նախարարի հաստատման են ներկայացվել մոտ երկու տասնյակ օրենսդրական ակտեր, որոնք սահմանված կարգով գրանցվել են ՀՀ արդարադատության նախարարության կողմից:

2005 թ. գործակալությունում ստեղծվեց էլեկտրոնային գրադարան, ինչը նպաստակ ուներ օժանդակելու փոքր եւ միջին ձեռնարկություններին, ինչպես նաև առանձին գյուտարարների՝ որոշակի բնագավառներում տեխնիկայի մակարդակը որոշելու հարցում: Գրադարանից օգտվողները հնարավորություն ստացան շատ կարճ ժամանակում ի հայտ բերել բոլոր այն տեխնիկական լուծումները, որոնք վերաբերում են տվյալ բնագավառի տեխնիկայի մակարդակին եւ որոնք համապատասխան հիմք կարող են ծառայել նոր մշակումների, ինչպես նաև նոր մտահղացումների իրագործման համար:

## ԳՅՈՒՏԵՐ ԵՎ ՕԳՏԱԿԱՐ ՄՈՂԵԼՆԵՐ

2005թ. 77 մտավոր սեփականության գործակալություն է ներկայացվել 208 գյուտի եւ 23 օգտակար մոդելի հայտ, որոնցից 226-ը՝ ազգային հայտատուներից, 5-ը՝ օտարերկրյա հայտատուներից (աղյուսակ 1):


2005թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ստացված գյուտերի եւ օգտակար մոդելների հայտերի ընդհանուր քանակը 1992 թվականից սկսած կազմել է 2355:

Աղյուսակ 1

Երկիրը	2004	2005
Հայաստան	129	226
Այլ երկրներ	15	5
Ընդամենը	144	231

2004թ. համեմատությամբ 2005 թ. ստացված հայտերի ընդհանուր քանակը ավելացել է 87-ով կամ 60%-ով, ընդ որում ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը ավելացել է 97-ով կամ 75%-ով, իսկ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է 10-ով:

Արտոնագրային համագործակցության մասին պայմանագրի ընթացակարգով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ՃՆԵԼ) ներկայացվող միջազգային եւ Եվրասիական արտոնագրային կոնվենցիայի ընթացակարգով Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա) ներկայացվող Եվրասիական հայտերով գործակալությունը հանդես է գալիս որպես ստացող գերատեսչություն միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացիների եւ իրավաբանական անձանց,



- ◆ Ազգային հայտատուներից
- Օտարերկրյա հայտատուներից
- ▲ Ընդամենը

- A. Մարդու կենսական պահանջմունքների բավարարում
- B. Տարբեր տեխնոլոգիական պրոցեսներ, տրանսպորտ
- C. Քիմիա, մետաղագործություն
- D. Մանածագործություն, թուղթ
- E. Շինարարություն, լեռնագործություն
- F. Մեխանիկա, լուսավորություն, ջեռուցում, շարժիչներ եւ պոմպեր, գեներ եւ ռազմամթերք, պայթեցման աշխատանքներ
- G. Ֆիզիկա
- H. Էլեկտրականություն

Սկ. 1

ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող ֆիզիկական անձանց համար:

2005 թ. գործակալությունը ստացել է գյուտի 3 միջազգային հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է միջազգային հայտերի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում դրանք առաքել է Միջազգային բյուրո:

Այսպիսով, 1994-2005 թ.թ. ժամանակաընթացքում Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Միջազգային բյուրո (ՃՄԵԼ) առաքվել է գյուտի 39 միջազգային հայտ:


2005թ. գործակալությունը ստացել է գյուտի 1 եվրասիական հայտ, ստուգել է անհրաժեշտ փաստաթղթերի առկայությունը, դրանց համապատասխանությունը սահմանված պահանջներին եւ արդյունքում սահմանել է եվրասիական հայտի ներկայացման թվականը եւ այդ թվականից մեկամսյա ժամկետում այն առաքել է եվրասիական արտոնագրային գերատեսչություն (Մոսկվա):

Այսպիսով, 1997-2005 թ.թ. ժամանակաընթացքում եվրասիական արտոնագրային գերատեսչություն առաքվել է գյուտի 9 եվրասիական հայտ:

Հաշվետու ժամանակաշրջանում 186 հայտով անցկացվել է նախնական փորձաքննություն, եւ որոշում է կայացվել հայտերի պաշտոնական հրապարակման մասին:

Գործավարությունն ավարտվել է 180 հայտով, ընդ որում՝

- 149 հայտով կայացվել են որոշումներ նախնական արտոնագիր տալու մասին.
- 1 հայտով կայացվել է որոշում հիմնական արտոնագիր տալու մասին.
- 19 հայտով կայացվել են որոշումներ օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին.
- գյուտի 1 հայտով կայացվել է որոշում նախնական արտոնագիր տալը մերժելու մասին.



- Մերժված եւ հետ կանչված հայտեր
- Դրական որոշում ստացած հայտեր

Նկ. 2

- օգտակար մոդելի 1 հայտով կայացվել է որոշում արտոնագիր տալը մերժելու մասին.
- գյուտի 8 հայտով կայացվել են որոշումներ գյուտի հայտը հետ կանչելու մասին.
- օգտակար մոդելի 1 հայտով կայացվել է որոշում օգտակար մոդելի հայտը հետ կանչելու մասին:

2005թ. ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի բաշխումն ըստ Միջազգային արտոնագրային դասակարգման բաժինների բերված է նկ.1-ում գրաֆիկի տեսքով :

Հայտերի քննարկման արդյունքները դիագրամի տեսքով բերված են նկ.2-ում:

2005թ. տրվել է գյուտի 126 արտոնագիր եւ օգտակար մոդելի 20 արտոնագիր:

## ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ


2005 թ. ազգային ընթացակարգով Ստավոր սեփականության գործակալություն է ներկայացվել ապրանքային նշանի գրանցման 1449 հայտ (որոնցից 1089-ը՝ ազգային հայտատուներից) եւ ապրանքի ծագման տեղանվան օգտագործման իրավունքի 3 հայտ:

Ապրանքային նշանների 1400 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն: Չետ են կանչվել 51 հայտեր, իսկ 89 հայտով կայացվել են ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին որոշումներ: Գրանցվել են 1282 ապրանքային եւ սպասարկման նշաններ (որոնցից 1040-ը՝ ազգային հայտատուների անունով), որոնց բաշխումն ըստ հայտատուների երկրների դիագրամի տեսքով բերված է նկ.3-ում:

Ապրանքի ծագման տեղանվան 6 հայտով կատարվել է նախնական փորձաքննություն, եւ կայացվել է տեղանվան օգտագործման իրավունք տալու մասին 3 որոշում:

Նշանների միջազգային գրանցման մասին Մադրիդյան համաձայնագրի եւ դրա արձանագրության շրջանակներում Հայաստանի Հանրապետության նշմամբ ստացվել է ապրանքային նշանների միջազգային գրանցման մասին 1627 ծանուցում: Նախնական մերժման մասին կայացվել է 384 որոշում, իսկ վերջնական մերժման մասին՝ 224: 23 միջազգային գրանցումներով մերժվել է ապրանքային նշանների գիջումը:

Հայտերի բաշխումն ըստ հայտատուների երկրների բերված է աղյուսակ 2-ում:



Նկ. 3

Երկիրը	Ըստ ազգային ընթացակարգի	Մադրիդյան համաձայնագրի եւ դրան կից արձանագրության շրջանակներում	Ընդամենը
Հայաստան	1089	-	1089
ԱՄՆ	153	106	259
Ավստրիա	-	39	39
Բենիլյուքս	16	98	114
Բուլղարիա	23	32	55
Գերմանիա	13	219	232
Դանիա	-	42	42
Եվրոպայի Միություն (OHIM)	-	46	46
Թուրքիա	5	49	54
Իռլանդիա	-	2	2
Իսպանիա	-	10	10
Իտալիա	1	99	100
Իրան	8	6	14
Լեհաստան	4	32	36
Լիխտենշտայն	-	10	10
Լատվիա	11	4	15
Կորեայի Հանրապետություն	7	3	10
Հնդկաստան	5	-	5
Հունաստան	1	2	3
Հունգարիա	-	18	18
Ճապոնիա	23	25	48
Մեծ Բրիտանիայի եւ Հյուսիսային Իռլանդիայի Թագավորություն	11	45	56
Շվեդիա	1	4	5
Շվեյցարիա	6	153	159
Չեխիա	-	14	14
Չինաստան	5	103	108
Ռումինիա	1	9	10
Ռուսաստանի Դաշնություն	20	132	152

Սլովակիա	-	9	9
Սլովենիա	-	41	41
Ուկրաինա	2	41	43
Ֆինլանդիա	3	2	5
Ֆրանսիա	7	110	117
Այլ երկրներ	34	122	156
<b>Ընդամենը</b>	<b>1449</b>	<b>1627</b>	<b>3076</b>

Հայաստանի Հանրապետությունից ներկայացվել է միջազգային գրանցման 26 եւ միջազգային գրանցման տարածքային ընդարձակման 2 հայտ:

2005 թ. համեմատությամբ 2004 թ. ազգային հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ 1598-ի դիմաց (2004թ.) 1089 հայտ:

Ինչ վերաբերում է օտարերկրյա իրավաբանական անձանց ակտիվությանը, ապա այն աճել է ազգային ընթացակարգով (256-ի (2004թ.) դիմաց 360 հայտ):

Հաշվետու ժամանակաշրջանում Մտավոր սեփականության գործակալություն է ներկա-

յացվել 20 արդյունաբերական նմուշի հայտ (որոնցից 10-ը՝ ազգային հայտատուներից, 5-ը՝ ճապոնիայից, 2-ը՝ Ռուսաստանի Դաշնությունից, 1-ը՝ Նորվեգիայից, 1-ը՝ Նիդեռլանդներից եւ 1-ը՝ Բուլղարիայից: Դրանցից 13-ը ստացել են արտոնագիր, 3-ի համար կայացվել է որոշում արտոնագիր տալու մասին:

2004 թ. համեմատությամբ ազգային եւ օտարերկրյա հայտատուներից ստացված հայտերի քանակը նվազել է՝ ազգայինը՝ 24-ի դիմաց (2004թ.) 10 հայտ եւ օտարերկրյա հայտատուներինը՝ 17 -ի դիմաց (2004թ.) 10 հայտ:

## ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐ

2005թ. ստացվել է ֆիրմային անվանման գրանցման 3058 հայտ:

Գրանցվել է ընդամենը 2917 անվանում, մերժվել է 141-ը:

Համաձայն ՀՀ կառավարության 2000թ. հունիսի 7-ի 289 որոշման, ֆիրմային անվան-

ման մեջ “հայ”, “Հայաստան”, “հայկական” բառերի եւ դրանց թարգմանությունների օգտագործման համար հաշվետու ժամանակաշրջանում տրվել է 19 թույլտվություն, որը 2004թ. համեմատությամբ 6-ով ավելի է :



## ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ

2005 թ. լազերային սկավառակներով հրապարակվել են «Արդյունաբերական սեփականություն» պաշտոնական տեղեկագրի 4 համար՝ № 1(33), № 2 (34), №3 (35) եւ № 4 (36): Տեղեկագրերը հրապարակվել են երկու լեզվով՝ հայերեն եւ ռուսերեն, որոնց մեջ ընդգրկվել են պաշտոնական տեղեկություններ 126 գյուտի, 20 օգտակար մոդելի, 44 արդյունաբերական նմուշի արտոնագրերի, 1100 գրանցված ապրանքային եւ սպասարկման նշանների, 2003 թ. գրանցված ֆիրմային անվանումների հայտերի մասին, ինչպես նաեւ տեղեկություններ արտոնագրերի եւ ապրանքային նշանների զիջման պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման մասին (100 գրանցում):

Իրականացվել են 126 գյուտի եւ 20 օգտակար մոդելի գծագրերի ներմուծումը, առաջին էջերի, լրիվ նկարագրությունների եւ հավակնության սահմանումների էլեկտրոնային ձևի, ինչպես նաեւ 44 արդյունաբերական նմուշի նկարագրության պատրաստումը եւ հրապարակումը՝ արտոնագրատերերին, գրադարաններին փոխանցելու, գործակալության համակարգչային ցանցում ներքին օգտագործման համար, ինտերնետային կայքում, ինչպես նաեւ «CISPATENT» սկավառակի վրա տեղադրելու համար՝ համընդհանուր օգտագործման նպատակով:

Չրատարակվել է «Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրի 12 համար:

Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ) ներկայացնելու համար պատրաստվել են 2004 թ. տեխնիկական եւ վիճակագրական հաշվետվությունները գյուտերի եւ օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային եւ սպասարկման նշանների վերաբերյալ:

«Գյուտերի հայտեր» պաշտոնական տեղեկագրերը եւ Չայարտոնագրի 2004 թ. տարեկան հաշվետվությունները տեղադրվել են ինտերնետային էջում՝ համընդհանուր ծանոթացման նպատակով:

Պաշտոնական տեղեկագրերն անհատույց փոխանցվել են Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոն, ԴՀ գիտությունների ազգային ակադեմիայի, Երեւանի պետական համալսարանի, Չայաստանի ծարտարագիտական համալսարանի, Չայկական գյուղատնտեսական ակադեմիայի գրադարաններ եւ Չայաստանի ազգային գրադարան եւ Չայաստանի ազգային գրապալատ: Պաշտոնական տեղեկագրերն անհատույց ուղարկվում են նաեւ ԴՀ մարզային կենտրոններ:

Գործակալությունը շարունակել է Գիտատեխնիկական լրատվության հայկական կենտրոնի արտոնագրային ֆոնդի համալրումը: Կենտրոնին տրամադրվել է օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններից ստացված տեղեկատվությունը:

Նախնական պայմանավորվածությամբ, արտոնագրային տեղեկատվության փոխանակման շրջանակներում, ԴՀ մտավոր սեփականության գործակալությունը պաշտոնական տեղեկագրերն ուղարկել է 21 օտարերկրյա պետությունների արտոնագրային գերատեսչություններ, ինչպես նաեւ՝ Ստավոր սեփականության համաշխարհային կազմակերպություն (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԳ) եւ Եվրասիական արտոնագրային գերատեսչություն (ԵԱԱԳ):

Ի կատարումն «Կոմպակտ սկավառակների վրա արտոնագրային տեղեկատվական տարածաշրջանային համատեղ արտադրանքի թողարկման մասին» համաձայնագրի, որին մասնակցում են ԱՊՀ 9 երկրներ, թողարկվել են «CISPATENT» անվանմամբ 12 կոմպակտ

սկավառակներ, որոնց 4 համարներում գետեղված են Հայաստանի Հանրապետությունում արտոնագիր ստացած 126 գյուտի եւ 20 օգտակար մոդելի մասին մատենագիտական տվյալներ հայերեն, ռուսերեն եւ անգլերեն լեզուներով: Վերոհիշյալ համաձայնագրի կատարման աշխատանքները ընթացքում են: «CISPATENT» սկավառակներով տեղեկատվության փոխանակման շրջանակներում Մտավոր սեփականության գործակալությունը արտոնագրային տեղեկատվություն է ստանում Եվրոպական արտոնագրային գերատեսչությունից, ինչպես նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Ավստրիայի, Ֆրանսիայի եւ 2005 թվականից նաեւ Կանադայի արտոնագրային գերատեսչություններից:

2005 թ. շարունակվել են Եվրասիական արտոնագրային գերատեսչության հետ համատեղ ստեղծված տեղեկատվական որոնման համակարգի փորձարկումները: Տվյալ համակարգը թույլ է տալիս բոլոր շահագրգիռ անձանց ազատ մուտք ունենալ Հայաստանի Հանրապետությունում գրանցված գյուտերի եւ օգտակար մոդելների հիմնապաշարներ:

Գործակալության տեղեկատվական հիմնապաշարը համալրվել է լազերային սկավառակների վրա գետեղված Ռուսաստանի Դաշնության արտոնագրային տեղեկատվությանը՝ սկսած 1924-ից առ այսօր: Շարունակվել է ESPACE World գյուտերի որոնման համակարգերի ստացումը ՄՄԳ-ից, BREF եւ COSMOS գյուտերի որոնման համակարգերի ստացումը՝ Ֆրանսիայից:

2005 թվականից «ROMARIN» ապրանքային նշանների որոնման համակարգը գործակալությանը հասանելի է դարձել ՄՄԳ-ի կողմից տրամադրված ինտերնետային էջից:

2005 թ. պատրաստվել են գյուտի, օգտակար մոդելի եւ արդյունաբերական մոնոլի ԳՀ արտոնագիր ստանալու մասին դիմումների նոր էլեկտրոնային ձեւերը: Գյուտի եւ օգտակար մոդելի ԳՀ արտոնագիր ստանալու մասին դիմումների նոր էլեկտրոնային ձեւերը տեղա-

դրվել են գործակալության ինտերնետային կայքի «Ձեւաթղթեր» ենթաէջում:

Թարմացվել է գործակալության ինտերնետային կայքի «Վիճակագրական տվյալներ» ենթաէջը:

Հաշվետու ժամանակաշրջանում շարունակվել են գործակալության ավտոմատացման եւ տեխնիկական վերազինման աշխատանքները: Գործակալությունը վերազինվել է Pentium 4 տեսակի համակարգիչներով, համակարգչային օժանդակ սարքերով եւ սարքավորումներով, այդ թվում՝ տպիչներով: Վերացվել են գործակալության տեղեկատվական համակարգի մեջ շահագործման ընթացքում ի հայտ եկած թերությունները եւ բացթողումները: Զարգացման արդյունքում առաջացած խնդիրների ներդրման նպատակով կատարվել են փոփոխություններ եւ լրացումներ: Արդյունքում ստեղծվել են հիմնապաշարների ծրագրերի նոր ենթավարկածներ, որոնք են՝

«Ապրանքային նշանների հիմնապաշարի» երրորդ ենթավարկածը, «Գյուտերի եւ օգտակար մոդելների հիմնապաշարի» երկրորդ ենթավարկածը, «Ֆիրմային անվանումների հիմնապաշարի» երկրորդ ենթավարկածը, «Ապրանքի ծագման տեղանունների հիմնապաշարի» ենթավարկածը, «Արդյունաբերական մոնոլիների հիմնապաշարի» ենթավարկածը:

Իրականացվել են Windows 2000/XP համակարգերի եւ Microsoft office-ի տեղադրում եւ կարգաբերում, օպերացիոն համակարգի սպասարկում, համակարգչային ծրագրերի տեղադրում եւ կարգաբերում, վնասված համակարգիչների եւ ծրագրերի ախտորոշում եւ անսարքության վերացում, գյուտերի, օգտակար մոդելների, ապրանքային նշանների, Ֆիրմային անվանումների հիմնապաշարների տեղադրում:

Իրականացվել են HP surestore dat auto-loader արխիվացման սարքի եւ Veritas Backup Exec ծրագրի տեղադրում եւ կարգաբերում, տվյալների արխիվացման ռազմավարության մշակում:

## ԼԻՑԵՆԶԱՅԻՆ ԵՎ ԶԻՋՄԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու ժամանակաշրջանում Արտոնագրերի զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի եւ Ապրանքային նշանների զիջման մասին պայմանագրերի եւ լիցենզային պայմանագրերի գրանցման կարգի համաձայն գործակալությունը շարունակել է լիցենզային պայմանագրերի եւ պահպանական փաստաթղթերի զիջման պայմանագրերի քննարկումն ու գրանցումը:

2005 թ. ընթացքում քննարկվել եւ գրանց-

վել են 103 պայմանագրեր, որոնցից 79-ը՝ ապրանքային նշանների զիջման մասին, 19-ը՝ ապրանքային նշանների օգտագործման լիցենզիա տալու մասին, 4-ը՝ գյուտի արտոնագրի զիջման մասին, 1-ը՝ գյուտի արտոնագրի օգտագործման բացառիկ լիցենզիա տալու մասին:

Ապրանքային նշանների զիջման պայմանագրերը կնքվել են ինչպես օտարերկրյա, այնպես էլ ազգային իրավաբանական անձանց միջեւ:

## ԻՐԱՎԱԿԱՆ ԴԱՇՏ

2005 թ. շարունակվել են օրենսդրական պրակտիկայի ընդհանրացման աշխատանքները, որոնց արդյունքների հիման վրա եւ հաշվի առնելով 2004 թ. ընթացքում նոր ընդունված օրենքները, առաջարկություններ են ներկայացվել ՀՀ առևտրի եւ տնտեսական զարգացման նախարարին՝ նոր ենթաօրենսդրական ակտեր մշակելու, ինչպես նաեւ գործող ենթաօրենսդրական ակտերում անհրաժեշտ փոփոխություններ եւ լրացումներ կատարելու վերաբերյալ: Այսպիսով, նախապատրաստվել եւ սահմանված կարգով ընդունվել են 10 նոր եւ 7 լրամշակված ենթաօրենսդրական ակտեր:

Մշակվել են «Հեղինակային իրավունքի եւ հարակից իրավունքների մասին» ՀՀ նոր օրենքի, ինչպես նաեւ դրա հետ կապված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի եւ «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերը, որոնք ՀՀ կառավարության կողմից ներկայացվել են ՀՀ Ազգային ժողովի քննարկմանը:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՇԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջազգային ոլորտում մտավոր սեփականության գործակալությունը հիմնականում համագործակցում է մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (ՄՍՀԿ), Եվրոպական արտոնագրային գերատեսչության (ԵԱԳ), Եվրասիական արտոնագրային գերատեսչության (ԵԱԱ), ինչպես նաև ԱՊՅ եւ այլ երկրների նմանատիպ կազմակերպությունների հետ:

Գործակալության նախաձեռնությամբ 2005 թ. Հայաստանի Հանրապետությունը անդամակցել է մտավոր սեփականության ոլորտում վեց պայմանագրերի, որոնցից չորսը վերաբերում են արդյունաբերական սեփականության բնագավառին, իսկ երկուսը՝ հեղինակային իրավունքի:

Գործակալության մասնագետները մասնակցել են ՄՍՀԿ Հեռարձակող կազմակերպությունների իրավունքների մասին պայմանագրի նախագծի քննարկմանը:

2005 թ. փոխադարձ այցելությամբ Բուխարեստ մեկնեց գործակալության պատվիրակությունը՝ գործակալության պետի գլխավորությամբ:

Հաշվետու ժամանակաշրջանում գործակալության չորս մասնագետներ երեք շաբաթով մասնակցել են Ռուսաստանի մտավոր սեփականության ինստիտուտի կազմակերպած ուսուցողական ծրագրերին: Չորս մասնագետներ մասնակցել են Եվրասիական արտոնագրային գերատեսչության (Մոսկվա) տարբեր աշխատանքային խմբերի նիստերին, որտեղ ՀՀ-ի քվոտաների հաշվին աշխատում են գործակալության երեք փորձագետներ:

2005 թ. գործակալության ութ մասնագետներ մասնակցել են Ժնևում, Լոնդոնում, Վիեննայում, Ալիկանտեում, Մոսկվայում, Թբիլիսիում կազմակերպված ուսուցողական ծրագրերին, սեմինարներին եւ այլ պաշտոնական հանդիպումների: Վերոնշյալ միջոցառումները կազմակերպվել են ֆինանսավորվել են ՄՍՀԿ-ի եւ ՄՍՀԿ միջազգային ակադեմիայի կողմից:

ԱՄՆ պետական դեսպարտամենտի միջազգային այցելուների ծրագրի շրջանակներում մեկ մասնագետ մասնակցել է հեղինակային իրավունքի հարցերով սեմինարի: